Ս.ՇՏԻԿՅԱՆ

ԼԵԶՎԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ, ՊՐՈՖ. ԱՃԱՌՅԱՆԸ ԵՎ ...

(Ակադեմիկոս Հրաչյա Աճառյանի ծննդյան տարեդարձի առթիվ)

Հոդվածս սկսելու եմ երկու՝ բավականին ընդարձակ մեջբերումներով, թեև, ինչպես հայտնի է, դասական հրապարակագրության արդեն սրբագործված ավանդույթները այդպիսի տարօրինակ սկիզբ չեն խրախուսում։ Եվ այսպես՝ «Պնդում եմ այսպիսի ասույթի պատասխանատվության լրիվ գիտակցությամբ և արմատապես տարազատվելով իմ շատ ընկերներից, որ չկա լեզու, որը դասակարգային չլինի և հետևաբար չկա մտածողություն, որը դասակարգային չլինի»։ Կամ «Տվյալ ազգի ամեն դասակարգ ունի իր ինքնուրույն, ինքնահատուկ և ուրեմն մյուս դասակարգերի համար կատարելապես խորթ մտածողություն, որը դրսևորվում է նրա լեզվի մեջ։ Իսկ սա էլ նշանակում է, որ դասակարգերը ունեն իրենց սեփական լեզուները։ Չի եղել ու չկա «համընդհանուր» մի լեզու, որը հավասարապես ծառայեր նույն ազգի թե ճնշող, և թե ճնշվող դասակարգին։ Արտադասակարգային, արտադասային լեզու առայժմ ֆիկցիա է»։

Սրանք «մեր ժամանակի մեծ լեզվաբան» Նիկողայոս Մառի մտքերն են, որոնք ես մեջ եմ բերում հիշողությամբ, շուրջ քառասուն տարվա հեռավորությունից և չնայած դրան՝ անվերապահորեն երաշխավորում եմ դրանց ճշգրտությունը։ Քանզի այս, և Մառի համանման բազմաթիվ այլ մտքերը, մենք՝ Երևանի Վյաչեսլավ Մոլոտովի անվան պետական համալսարանի (այդպիսին էր այդ հաստատության լրիվ անվանումը) բանասիրական ֆակուլտետի ուսանողներս ասում ու կրկնում, բացատրում ու մեկնաբանում էինք բազում-բազմաթիվ անգամներ, այն հիմնավորում ու հարստացնում էինք գեղարվեստական ստեղծագործություններից բերված նորանոր փաստերով ու մարքսիզմի հին-նոր քուրմերի՝ ոչ քիչ թվով անառարկելի համարվող վկայակոչումներով։ Լեզվի դասակարգայնության տեսությունը առանցքային մասն էր կազմում Նիկողայոս Մառի հիմնադրած «Լեզվի նոր ուսմունքի», որ ջանասեր հետևողականությամբ մատուցվում էր ուսանողությանը, այսինքն՝ մեզ բոլորիս։

Պակասը լրացնում էր «Լեզվաբանության ներածություն» առարկայի մեր հանրաճանաչ դասախոսը՝ պրոֆեսոր Էդուարդ Աղայանը։ Նրա բովանդակաշատ դասախոսությունների շնորհիվ մենք սովորեցինք ու իմացանք, որ յուրաքանչյուր ազգի ներսում գոյություն ունեցող երեք հիմնական դասակարգերը, այսինքն՝ ազնվականությունը, բանվորությունը և գյուղացիությունը ունեն իրենց սեփական և միայն իրենց մտածողության արգասիքը

հանդիսացող լեզուներ, իսկ քանի որ դասակարգերը հնուց անտի իրար նկատմամբ «անտոգոնիստական» են եղել, այսինքն՝ հակադիր ու հակադրված, ապա տրամագծորեն հակադիր էին նաև նրանց լեզուները, հակադիր՝ անգամ իրար չհասկանալու չափ։ Եվ բնականաբար, ազնվական դասակարգի մտավոր արգասիքը հանդիսացող ստեղծագործությունները, որոնք իրենց դրսևորումն են ստանում նրանց «ազնվական» լեզվի մեջ, հենց այդ լեզվի պատճառով էլ անհասկանալի ու անըմբռնելի պիտի մնան բանվոր-պրոլետար դասակարգի համար, իր հերթին էլ, այս դասակարգի ստեղծած մտավոր արժեքները չեն կարող մատչելի լինել բարձրաստիճան դասի ներկայացուցիչներին, որովհետև գրի են առնվել նրանց «բանվորական» լեզվով։ «Ինչ է հասկանում բուրժուան, օրինակ, «ուտել» ասելով, – ներքին ինքնավստահությամբ առլեցուն պատգամում էր մեր դասախոսը, - «ուտել» ասելով նա հասկանում է համադամ սննդամթերքների մի քանի տասնյակ տարբերակներ, ամենաընտիր տեսակների բազմաթիվ ուտեստներ ու նախուտեստներ, իր սեղանին սպասարկող մատուցողների մի ամբողջ համախումբ։ Իսկ ինչ է հասկանում հասարակ բանվորը՝ պրոլետարը «ուտել» ասելով, – մեր դասախոսը խորիմաստ-բազմանշանակալից ձևով լռեց, – դուք հրաշալի հասկանում եք չէ՞, թե «ուտել» ասելով ինչ է հասկանում բանվորա-գյուղացիական դասակարգի ներկայացուցիչը։ Այստեղից էլ՝ եզրակացություն. քանի որ անտոգոնիստական դասակարգերի մտածողության ամբողջ համակարգը հակադրված է իրար նկատմամբ, ուրեմն նրանք դասակարգային միանգամայն հակադիր իմաստներ են դնում անգամ նույն բառի մեջ։ Զարգացման հաջորդ աստիճանում, տվյալ դասակարգը արդեն գտնում կամ ստեղծում է իր բարձր նկարագրին համապատասխանող բառը, այն դնում է շրջանառության մեջ, ի հակադրություն նախորդի։ Բերված օրինակի դեպքում՝ հայկական իշխող-ազնվականական դասակարգը շուտով սկսեց կիրառել իր բարձր էության համար ավելի հատկանշական «սնվել» կամ «սնունդ ընդունել» ձևերը, բանվորական-աշխատավորական դասին թողնելով կոշտ ու կոպիտ «ուտել» բառաձևը»։

Այսպիսին էր լեզվի դասակարգայնության մասին միակ գիտական և միակ մարքսիստականը համարվող «լեզվի նոր ուսմունքի» զարգացրած տեսությունը։ Եվ հայոց լեզվի մեր հին ու նոր բառարաններում մենք՝ ուսանողներս, քրտնաջան եռանդով ոչ միայն որոնում ու գտնում էինք այն բառերն ու ոճերը, որոնք տարբեր դասակարգերի հատկանշական «սեփականությունն» էին կազմում, այլև վեճ-աղաղակով ապացուցում էին դրա միանգամայն օրինաչափ լինելը։ Բարձրաստիճան հայկական դասն, օրինակ, պետք է օգտագործեր «որովայն» բառը գռեհիկ «փորի» փոխարեն, որի գործածումը հատկանշական էր բանվորին ու գյուղացուն,

պիտի գործածեր իր բարձր դասին համապատասխանող «ըմպել» բառը «խմել» տգեղ ձևը հանձնելով ստորիններին, պիտի կիրառեր իրեն այնքան բնութագրական «համբուրել» քնքշագեղ ձևը, «պաչելը» զիջելով ստորիններին...

Ես այս դեպքում էլ բոլոր փաստերն ու վկայակոչումները բերում եմ մոտ քառասուն տարվա վաղեմության հիշողությամբ և այս դեպքում էլ անվերապահորեն երաշխավորում եմ ամեն տողի ու բառի ճշգրտությունը: Ինձ ստուգել ցանկացողներին խորհուրդ կտամ կարդալ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (այն ժամանակ) Էդուարդ Աղայանի «Լեզվաբանության ներածություն ըստ լեզվի նոր ուսմունքի» աշխատություն-դասագիրքը, հրատարակված Երևանում, 1919 թվականին և մանավանդ այնտեղ գտնվող «Լեզու, մտածողություն, հասարակություն» գլուխը:

***

Համալսարանից «Համեմատական քերականություն» առարկայի՝ իր հերթական դասախոսությունն ավարտելուց հետո, այն ժամանակվա Ստալինյան պողոտայի վերնամասում գտնվող իրենց բնակարան էի ուղեկցում պրոֆեսոր Հրաչյա Աճառյանին: Անցողակի նշեմ, որ թե՛ Աճառյանը, և թե՛ Ղափանցյանը տարիներ առաջ հեռացվել էին համալսարանից՝ ժամանակի առաջավոր, մարքսիստական լեզվաբանությունը, այսինքն՝ Նիկողայոս Մառի հիմնադրած «լեզվի նոր ուսմունքը» չընդունելու և մի քանի արմատական հարցերում նրան հակադրվելու համար: Հեռացումն, իհարկե, ուղեկցվել էր մեր երկու մեծանուն ակադեմիկոսների «գաղափարական մշակմամբ», այսինքն՝ նրանց «հետադիմական, բուրժուա-նացիոնալիստական» լեզվի հարցում «հակամարքսիստական» սխալների անողոք քննադատությամբ: «Գաղափարական մշակում», որը թե՛ ակադեմիկոս Աճառյանը, և թե՛ ակադեմիկոս Ղափանցյանը կրել էին ճշմարիտ գիտնականին վայել սկզբունքայնությամբ և արժանապատվությամբ, և վերջապես, տեղի տալով մասնագետ մտավորականության ու քիչ-շատ պահանջկոտ տրամադրված հասարակայնության պահանջներին, «հարազատ պարտիան ու կառավարությունը» 1952 թ. սկզբներին նրանց երկուսին էլ վերականգնել էին իրենց նախկին դասախոսական պաշտոններում: Այդ բոլորը մենք՝ ուսանողներս, արդեն գիտեինք, և հենց դա էր այն անբեկանելի հարգանքը ծնող հիմնական շարժառիթներից մեկը, որ տածում էինք նրանց նկատմամբ: Գիտեինք նաև, որ պրոֆեսոր Աճառյանը աչքերի խիստ տկարության պատճառով դժվարանում էր առանց օգնության քայլել փողոցում, առավել ևս, անցնել անցումներն ու տրամվայի գծերը, ուստի, մեր սիրելի պրոֆեսորին տուն ուղեկցելու համար մենք որոշակի

աշխատակարգ էինք մշակել՝ յուրաքանչյուր դասախոսությունից հետո, նախապես մշակված կայուն հաջորդականությամբ, մեզանից մեկն ու մեկը պարտավորվում էր կատարել ուղեկցողի հաճելի գործը։ Այս անգամ էլ հերթն իմն էր։

Նոր էինք լսել պրոֆեսոր Էդուարդ Աղայանի դասախոսությունը լեզվի՝ որպես դասակարգային երևույթի մասին, դասախոսությունից հետո ծայր առած մտքերի հախուռն փոխանակության ժամանակ բազում-բազմաթիվ փաստ ու փաստարկներ էինք բերել այդ տեսակետը էլ ավելի հաստատելու ու մարքսիստորեն հիմնավորելու համար, ուստի և զարմանալի չէ, որ պրոֆեսոր Աճառյանին թևանցուկ արած տուն ուղեկցելիս, մեր խոսակցությունը գնար հենց այդ ուղղությամբ։ Ոգևորված վերարտադրեցի մոտավորապես այն ամենը, ինչ նշել եմ վերևում, հավելեցի, որ, օրինակ, տիբեթերենն ունի երկու կարգի բառեր՝ հարգական՝ պատվավոր, և հասարակ՝ ռամիկ դասերի համար և այդ երկու դասերի ներկայացուցիչները, գործածելով իրենց սեփական լեզուները, հաճախ իրար չեն հասկանում։ Ինքնավստահորեն շարունակեցի, որ այդ երևույթը նույնությամբ նկատվում է նաև հնդկական գրականության մեջ, քանզի ազնվականներն ու քրմերը խոսում են «բարձր դասի» սանսկրիտով, իսկ ժողովուրդը՝ արհամարհական համարվող պալի լեզվով, և այս դեպքում էլ առկա է լինում իրար չհասկանալու նույն երևույթը։

... Պատրաստվում էի բերել ասածս հավաստող նորանոր օրինակներ, քննարկել նույն երևույթը արդեն հայոց լեզվի առնչությամբ, անպայման ցանկանում էի անդրադառնալ Սմբատ Շահազիզի «Լևոնի վիշտը» պոեմի նախերգանքի հանրածանոթ տողերին («Ժամանակակից գրում եմ լեզվով, որ ամենայն մարդ հասկանա») և տեղնուտեղը ապացուցել, որ նա՝ հասարակ ժողովրդի գրող Սմբատ Շահազիզը, հենց ժողովրդական լեզվով էլ պիտի գրեր, հակադրվելու համար հայ ժողովրդի «բարձր» դասակարգի լեզվին, և այստեղ էլ ահա առկա է նույն ազգի մեկ լեզվի՝ դասակարգայնորեն երկփեղկված լինելու փաստը, երբ Աճառյանը, որ մինչ այդ հանդարտ ու խաղաղ քայլում էր կողքից, նախ՝շեշտակիորեն ցնցեց թևս և ապա, կտրուկ կանգնելով, դարձավ ինձ.

- Տղա՛, այդ ապուշ բաների ինձ ինչո՞ւ ասացիր։

- Իմ ասածները ա...ապուշ բաներ չեն, ընկեր Աճառյան, – մի կերպ ինձ հավաքեցի ես, – այսօր արդեն վերջնականապես ապացուցված է, որ յուրաքանչյուր դասակարգային հասարակության մեջ տվյալ ազգի լեզուն շերտավորված է, և տարբեր դասակարգերի լեզուները միանգամայն տարբեր են ու իրար նկատմամբ հակադրված։

Աճառյանը կես-հեգնական հայացքով կողքից նայեց ինձ։

- Է՛, ո՞վ ըսավ։

- Տվեցի Մարքսի, Էնգելսի, Մառի, Մեշչանինովի, Չեմոդանովի և էլի մի քանիսի՝ մեր ժամանակներում անառարկելի համարվող մեծությունների անունները, ներքնապես պատրաստվեցի նրանց տեսակետները շարադրել սկսելու համար...

- Է՛, չեղավ, չեղա՛վ Սուրեն, – ինձ դժգոհ ընդհատեց Աճառյանը, – ես կամենում եմ խնդիրը իրական գետնի վրա տեղափոխել, իսկ դու ինձ վրա ծանրումեծ անուններ ես կրակում։ Ադիկա գիտական բանավեճ չեղավ, տղաս։

- Լեզուն դասակարգային երևո՛ւյթ է, – մի որոշ ժամանակ լուռ քայլելուց հետո, բացահայտ հեգնական տոնով դժգոհ փնթփնթաց Աճառյանը, – տվյալ ազգությանը պատկանող ամեն դասակարգ ունի ի՛ր լեզուն..., ազնվական դասակարգի ստեղծած մտավոր արժեքները անհասկանալի պիտի մնան պրոլետար դասակարգի համար, քանզի նրանց լեզուները հակադի՛ր են, – խոսակցիս ձայնը խստացավ, – ավելի խենթուխելառ մտքեր կյանքումս լսած չունիմ։

- Բայց ընկեր Աճառյան, – վախվորած սկսեցի ես, – ինչպես ձեզ էլ քաջ հայտնի է, ընդհանուր լեզվաբանությունն արդեն ապացուցել է...

Աճառյանը դարձյալ շեշտակի կանգ առավ, ապա կտրուկ դարձավ ինձ։

- Տղա՛, ռուս նշանավոր գրող Միխայիլ Լերմոնտով լսած ունի՞ս։

- Ի-իհարկե, – խոսակցության այս անսպասելի շրջադարձից հազիվ ինձ հավաքած՝ եռանդով վրա բերեցի ես, – նրա գործերը մեծ անուն ու ճանաչում ունեն, իսկ Պուշկինի սպանության առթիվ նրա գրած «Պոետի մահը» ցնցեց ամբողջ Ռուսաստանը...

- Է՛, տղա, ինձ կարո՞ղ ես ասել, թե Միխայիլ Լերմոնտովը իր ժողովրդի ո՛ր դասակարգի զավակ էր։

- Նա ազնվական էր, ընկեր Աճառյան, – փութաջանորեն շարունակեցի ես, այդպես էլ չկռահելով, թե խոսակցությունը դեպի ո՞ւր է գնում։

- Մենակ ի՞նքն էր ազնվական։ Նրա հայրը, պապը, մեծ հայրը նույնպես ազնվականներ էին։ Դա շոտլանդական «Լերմոնտ» ընտանքն էր, որը դեռ 17-րդ դարում իր հայրենի երկիրը թողած՝ վերաբնակեցվեց Ռուսաստանում։ Ասել կուզեմ, որ «Լերմոնտները» դեռ Շոտլանդիայում էլ ազնվականներ էին։

- Ա-այո, միանգամայն ճիշտ է։

- Է՛, եթե այդ այդպես է, – Աճառյանի ձայնը դարձյալ հեգնալից դարձավ, – ուրեմն ազնվական Միխայիլ Լերմոնտովի գրությունները պետք է որ հասկանալի ու ըմբռնելի լինեին

միայն իր դասակարգի ներկայացուցիչների համար, քանզի գրված էին ազնվականական ռուսերենով, – Աճառյանը ծիծաղեց, – իսկ մյուսները, ի մասնավորի, գործավոր դասակարգը, գյուղացիությունը անոր գրվածքները բնավ և երբեք չպիտի կարողանային հասկանալ, որովհետև լեզուն իրենցը չէր։ Այդպե՞ս է։

Շփոթված լռեցի...

- Լերմոնտովը մեկ հատ թատերական գործ ունի «Դիմակահանդես» անունով։ Լսած ունի՞ս։

Ներքնապես ուրախացած, որ խոսակցությունն սկսեց գնալ այլ հունով, ոգևորված մի քանի դրվատական նախադասություններ ասացի «Դիմակահանդեսի» մասին, հավելեցի, որ այն բոլորովին վերջերս բեմադրվել է Երևանում և դրամայի հիմնական հերոսի՝ Արբենինի դերը հիացնող վարպետությամբ կատարում է դերասան Վահրամ Փափազյանը։ Չմոռացա, իհարկե, շեշտել, որ «Դիմակահանդեսը» ես տեսել եմ և շատ եմ հավանել։

- Կեցիր, կեցիր տղա՛, – Աճառյանը դարձյալ ցնցեց իմ թևանցուկ արած թևը, – իսկ դու ինչո՞ւ պիտի հասկանայիր այդ գործը։

- Ընկեր Աճառյան իսկ... իսկ ինչո՞ւ պիտի չհասկանայի։

- Պիտի չհասկանայիր, որովհետև Լերմոնտովը, ինչպես քիչ առաջ արդեն ասացի, ազնվական էր ու ազնվականի որդի, իսկ դու և միլիոնավոր քեզ նմանները քրտնաթոր պրոլետարներ եք և պրոլետարիատի տառապյալ զավակներ, – Աճառյանի ձայնը դարձյալ հեգնական դարձավ, – քիչ առաջվա քո տված տեսությանց համաձայն, քանի որ մեկ տվյալ ազգի լեզուն դասակարգայնորեն երկատված է իրար չհասկանալու աստիճան, ուրեմն բանվոր-պրոլետարները ազնվական գրող Միխայիլ Լերմոնտովի «Դիմակահանդեսի» լեզուն պիտի չհասկանային։ Իսկ եթե չհասկանային լեզուն, չէին հասկանա նաև գործի նյութը, ձեր բառերով ասած՝ գաղափարական բովանդակությունը։ Ճիշտ է, չէ՞։

- Դե... ընկեր Աճառյան, խոսքը... լեզվի, որպես երևույթի մասին է...

- Տղա՛, ուկրաինացիք մեկ հատ դասական բանաստեղծ ունին, – ինձ դարձյալ ընդհատեց Աճառյանը, – Թարաս Շևչենկո։ Անուն-ազգանունը գոնե լսած կլինես։ Նա ո՞ր դասակարգի զավակն էր, կրնա՞ս ինձի ըսել։

Ինչ-որ անորոշ բաներ ասացի, արտասանեցի մեկ-երկու չափատող Շևչենկոյի հայտնի «Կտակ» բանաստեղծությունից, որևէ կերպ աշխատեցի երկարաձգել տրվելիք պատասխանս, որովհետև արդեն կռահում էի, թե ինչպես էր զարգանալու խոսակցությունը, որն ամենևին էլ չէր լինելու հօգուտ ինձ։

- Թարաս Շևչենկոն ճորտ էր, – քիչ լռելուց հետո սկսեց Աճառյանը, – ճորտեր էին նաև նրա հեռու-մոտիկ նախորդները: Մառի և նրա կողմնակիցների լույս գցած «Լեզվի նոր ուսմունքի» տեսությանց համաձայն, նրա գրածներն, ուրեմն, պետք է որ հասկանային մեն-մենակ ճորտական դասի ընթերցողները, քանի որ նա գրում էր «ճորտական» ուկրաիներեն և բնավ պիտի չհասկանային բարձրաստիճան դասակարգի ներկայացուցիչները՝ իշխաններն ու ազնվականները, որովհետև նրանց լեզուն «ազնվականական» ուկրաիներեն էր: Է՜, այսպիսի անմիտ բա՞ն կլինի և կարո՞ղ էր արդյոք այսպես լինել իրականում: Եթե դա այդպես լիներ, այսինքն՝ Թարաս Շևչենկոն իր լեզվի դասակարգայնության պատճառով, – Աճառյանը քմծիծաղ տվեց, – հասկանալի լիներ միայն ճորտերին ու ՈՒկրաինայի ցածր դասակարգին, նա կկարողանա՞ր բարձրանալ մինչև իր ժողովրդի գրականության դասականի աստիճանին: Հե՞, ինչ կասես:

Ի՞նչ պիտի ասեի...

- Բայց ընկեր Աճառյան, – երկարաձգվող լռությունը մի կերպ խզելու համար սկսեցի ես, – դուք անշուշտ չեք ժխտի, որ տվյալ լեզվում առկա նույն բառը կամ բառակապակցությունը կիրառության ժամանակ կարող է իմաստային շատ տարբեր նշանակություններ ունենալ...

Պատրաստվում էի ասել՝ «նայած, թե որ դասակարգի կողմից է կիրառվում», պատրաստվում էի օրինակներ բերել և մանավանդ նշել «ուտել» բառի տարաբնույթ իմաստավորումները, բայց Աճառյանը դարձյալ ընդհատեց ինձ:

- Այդ արդեն ուրիշ խնդիր է, տղաս: Այդ հարցը վեճ չի վերցնում և այստեղ դու անշուշտ իրավացի ես: Հովհաննես Թումանյանի «Կիկոսում», օրինակ, կարդում ենք. «Վեր ելավ սարին» և այս դեպքում վեր ելավ բառակապակցությունը նշանակում է «վեր բարձրացավ», ճի՞շտ է: Ժողովուրդը լայնորեն կիրառում է «վեր ընկավ» ձևը, որը սակայն նշանակում է «ցած ընկավ», – Աճառյանը բազմանշանակալից նայեց ինձ և բարձրացրեց ցուցամատը, – տեսնո՞ւմ ես, նույն բառակապակցությունը այս երկու դեպքերում ուղիղ հակադիր իմաստներ ունի և հենց դա է մեր լեզվի ամենամեծ հարստություններից մեկը, որ միևնույն բառը կամ բառային միացությունը մի քանի իմաստներ ունի, նայած թե ինչպիսի ենթաբնագրով ես նրան առնում, – լուրջ, կենտրոնացած Աճառյանը դարձյալ երգիծանքի անցավ, – տղա՛, թե՞ պիտի ասես, որ Նիկողայոս Մառի տեսությանց համաձայն «վեր ելնելը» պրոլետարիատի բառառճն է, քանի որ նա ունի բարձրանալու իմաստը, իսկ պրոլետարիատը պետք է միշտ բարձրանա ու բարձրանա, իսկ «վեր ընկնելը» հատկանշական է բուրժուազիային, որովհետև նշանակում է «ցած ընկնել», իսկ բուրժուազիան պիտի որ անպայման ընկնի, հա՞:

Աճառյանը դառը ծիծաղեց, ծիծաղեցի ես էլ։

- Նիկողայոս Մառի «Լեզվի նոր ուսմունքի» հիմնական սյունը կազմող «Լեզուների դասակարգայնության տեսությունը» հում-եփ մտքերի շիլաշփոթից կազմված այնպիսի մի կատարյալ հիմարություն է, որի նման երկրորդը ոչ մի տեղ և ոչ մի ժամանակ չի եղել։ Ինչպես դու էլ տեսար, այն հերքեցինք հենց այնպես, առանց որևէ նախնական պատրաստության, փողոցում միատեղ քայլելու ընթացքում։

... Լեզվի դասակարգայնության տեսությո՞ւնն է կատարյալ հիմարություն... Նիկողայոս Մառի՞ն է այսպես անողոքաբար քննադատում, «Մեծ Մառին», որն անառարկելի ու անբեկանելի մեծություն էր ուսանողներիս համար և հենց այդ կտրվածքով էլ մատուցվում էր... Եվ սա հենց այն բուրժուական մտայնությունը չէ՞, որի դեմ մենք կոչված էինք սկզբունքային ու անողոք պայքար մղելու...

Եվ երևի այս բոլորի համամիասնությունն էր պատճառը, որ Աճառյանն իր ասելիքը հազիվ ավարտած՝ ես անհապաղ վրա բերեցի.

- Ընկեր Աճառյան, ձեր ասածն, իհարկե, ճիշտ է, բայց դուք հարցերը շատ եք կոնկրետ դնում։ Լերմոնտով, Շևչենկո... Լեզուն համընդհանուր, համազգային երևույթ է և ոչ թե մեկ կամ մի քանի անհատների մենաշնորհ-սեփականությունը, և ուրեմն, որպես այդպիսին, նա դասակարգային բնույթ ունի, – նկատելով, որ Աճառյանն ուշադիր լսում է ինձ, ոգևորված շարունակեցի, – Լեզուն չի եղել դասակարգային և չի լինելու դասակարգային, որովհետև դասակարգերը չեն եղել և չեն լինելու։ Լեզուն դասակարգային է միայն դասակարգային հասարակության պայմաններում։

Աճառյանի դեմքը, եթե կարելի է այդպես ասել, ողբերգական-ցավակցական արտահայտություն ստացավ։ Նույն արտահայտությամբ էլ նայեց ինձ.

- Վա՜խ, վա՜խ, վա՜խ, – ձեռքով խփեց ծնկանը, – այս ինչե՜ր են մտցնում ձեր փոքրիկ և հիմար գլուխների մեջ...

Հայաստանի Հանրապետություն, 1994 թ.,

№ 128, հունիսի 24